Գ 2

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-1/17-ԴԵՂՈՐԱՅՔ և ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐ

N 11/275-2017

ք. Երևան <<04>> << 12 >> 2017թ.

ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա.Գ. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և «Նատալի Ֆարմ» ՍՊԸ - ն, ի դեմս տնօրեն Ա. Ասատրյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **576 552,70 (հինգ հարյուր յոթանասունվեց հազար հինգ հարյուր հիսուներկու դրամ, յոթանասուն լումա)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» << օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[3]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

---

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱԱԾ **ք.Երևան, Նալբանդյան104** **ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն** **Հ/հ 900011301075** **ՀՎՀՀ 01507079**	**«Նատալի Ֆարմ» ՍՊԸ** **ք. Երևան, Աբովյան42-2** **«Ամերիաբանկ» ՓԲԸ** **Հ/հ 1570005065330100** **ՀՎՀՀ 01222567**
Տնօրենի տեղակալ	**Տնօրեն**
Ա. Հակոբյան	**Ա. Ասատրյան**

Հավելված N 1
«04» 12 2017թ. կնքված
11/275-2017 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
12	33661159/3	Ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ) C01CA06	Ուկրաինա	Լուծույթ ներարկման 10մգ/մլ, 1մլ սրվակ: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	սրվակ	76,00	1520,00	20	Ք. Երևան, Ամիրյան 23	20	2017թ. Դեկտեմբերի 15
13	33621330/2	Նիկեթամիդ R07AB02	Ուկրաինա	Լուծույթ ներարկման , 250մգ/մլ, 2մլ սրվակ: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	սրվակ	112,00	5600,00	50	Ք. Երևան, Ամիրյան 23	50	2017թ. Դեկտեմբերի 15
15	33671121/2	Արծաթի պրոտեինատ D08AL01	Հայաստան	Լուծույթ, 20մգ/մլ, 15մլ պլաստիկե շշիկ: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	շիշ	253,60	5072,00	20	Ք. Երևան, Ամիրյան 23	20	2017թ. Դեկտեմբերի 15
21	33691239/2	Ռոպինիրոլ (ռոպինիրոլի հիդրոքլորիդ) N04BC04	Հունգարիա	Դեղահատեր երկարատև ձերբազատմամբ թաղանթապատ, 4մգ: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	դեղահատ	260,70	93852,00	360	Ք. Երևան, Ամիրյան 23	360	2017թ. Դեկտեմբերի 15
24	33691138/2	Գլյուկոզ b05cx01, v04ca02, v06dc01	Հայաստան	Լուծույթ կաթիլներարկման, 50մգ/մլ; 500մլ պլաստիկե փաթեթ: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	հատ	300,99	1504,95	5	Ք. Երևան, Ամիրյան 23	5	2017թ. Դեկտեմբերի 15
29	33631440/2	Բորաթթու, կապարի ացետատ, նատրիումի տետրաբորատ, տալկ,	Հայաստան	Մածուկ, 70մգ/գ+3մգ/գ+70մգ/գ+250մգ/գ+14մգ/գ +250մգ/գ+3մգ/գ+35մգ/գ+35մգ/գ; 50գ պարկուճ: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):	հատ	347,20	13888,00	40	Ք. Երևան, Ամիրյան 23	40	2017թ. Դեկտեմբերի 15

		սալիցիլաթթու, ցինկի օքսիդ, անանուխի յուղ, հեքսամեթիլեն տետրամին, ֆորմալդեհիդի լուծույթ D08AX		Ֆիրմայի նշումով:							
37	33631230/3	Պովիդոն յոդ D08AG02, D09AA09, D11AC06, G01AX11, R02AA15, S01AX18	Բելառուս	Քսուք , 100մգ/գ, 20գ պարկուճ: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	հատ	326,27	11419,45	35	Ք. Երևան, Ամիրյան 23	35	2017թ. Դեկտեմբերի 15
38	33651135/4	Քլորամֆենիկոլ D06AX02, D10AF03, G01AA05, J01BA01, S01AA01, S02AA01, S03AA08	Ուկրաինա	Դեղահատեր, 500մգ: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	դեղահատ	40,92	8184,00	200	Ք. Երևան, Ամիրյան 23	200	2017թ. Դեկտեմբերի 15
40	33611200/2	Լոպերամիդ A07DA03	Բելառուս	Դեղապատիճներ, 2մգ : Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	հատ	8,00	3200,00	400	Ք. Երևան, Ամիրյան 23	400	2017թ. Դեկտեմբերի 15
41	33691136/7	Նատրիումի քլորիդ A12CA01, B05CB01, B05XA03	Հայաստան	Լուծույթ կաթիլներարկման, 9մգ/մլ, 100մլ, պլաստիկե փաթեթ: : Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	հատ	289,14	8674,20	30	Ք. Երևան, Ամիրյան 23	30	2017թ. Դեկտեմբերի 15
42	33691136/6	Նատրիումի քլորիդ A12CA01, B05CB01, B05XA03	Հայաստան	Լուծույթ կաթիլներարկման, 9մգ/մլ, 250մլ, պլաստիկե փաթեթ: : Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	հատ	304,15	9124,50	30	Ք. Երևան, Ամիրյան 23	30	2017թ. Դեկտեմբերի 15
43	33691136/5	Նատրիումի քլորիդ A12CA01, B05CB01, B05XA03	Հայաստան	Լուծույթ կաթիլներարկման, 9մգ/մլ, 500մլ, պլաստիկե փաթեթ: : Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	հատ	300,20	1501,00	5	Ք. Երևան, Ամիրյան 23	5	2017թ. Դեկտեմբերի 15
45	33651170/5	ԱցիկլովիրD06BB03, J05AB01, S01AD03	Բելառուս	Քսուք , 50մգ/գ, 5 գ պարկուճ: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	հատ	259,00	5180,00	20	Ք. Երևան, Ամիրյան 23	20	2017թ. Դեկտեմբերի 15
46	33651127/2	Դոքսիցիկլին A01AB22, J01AA02	Բելառուս	Դեղապատիճներ, 100մգ : Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	հատ	10,15	2030,00	200	Ք. Երևան, Ամիրյան 23	200	2017թ. Դեկտեմբերի 15

50	33642230/6	Լևոթիրոքսին H03AA01	Գերմանիա	Դեղահատեր, 50մկգ : Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	դեղահատ	13,05	10440,00	800	Ք. Երևան, Ամիրյան 23	800	2017թ. Դեկտեմբերի 15
52	33642230/4	Լևոթիրոքսին H03AA01	Գերմանիա	Դեղահատեր, 100մկգ : Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	դեղահատ	14,57	11656,00	800	Ք. Երևան, Ամիրյան 23	800	2017թ. Դեկտեմբերի 15
65	33621740/4	Ամլոդիպին C08CA01	Բելառուս	Դեղահատեր, 5մգ : Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	դեղահատ	9,89	14835,00	1500	Ք. Երևան, Ամիրյան 23	1500	2017թ. Դեկտեմբերի 15
70	33621700/3	Մետոպրոլոլ C07AB02	Հունգարիա	Դեղահատեր, 25մգ : Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	դեղահատ	18,00	21600,00	1200	Ք. Երևան, Ամիրյան 23	1200	2017թ. Դեկտեմբերի 15
72	33621420/3	Ատորվաստատին C10AA05	Բելառուս	Դեղահատեր թաղանթապատ 20մգ: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	դեղահատ	36,00	43200,00	1200	Ք. Երևան, Ամիրյան 23	1200	2017թ. Դեկտեմբերի 15
75	33651129/2	Կլարիթրոմիցին J01FA09	Լատվիա	Դեղահատեր 500մգ: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	դեղահատ	256,08	107553,60	420	Ք. Երևան, Ամիրյան 23	420	2017թ. Դեկտեմբերի 15
80	33621310/2	Տրիմետազիդին (տրիմետազիդինի դիհիդրոքլորիդ) C01EB15	Լեհաստան	Դեղահատեր թաղանթապատ կարգավորվող ձերբազատմամբ, 35մգ : Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	դեղահատ	52,00	59280,00	1140	Ք. Երևան, Ամիրյան 23	1140	2017թ. Դեկտեմբերի 15
83	33621550/2	Ռամիպրիլ C09AA02	Սլովենիա	Դեղահատեր,5մգ: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	դեղահատ	40,00	24000,00	600	Ք. Երևան, Ամիրյան 23	600	2017թ. Դեկտեմբերի 15
85	33611300/3	Գլիբենկլամիդ, մետֆորմին (մետֆորմինի հիդրոքլորիդ) A10BD02	Ֆրանսիա	Դեղահատեր թաղանթապատ, 5մգ+500մգ: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	դեղահատ	54,73	32838,00	600	Ք. Երևան, Ամիրյան 23	600	2017թ. Դեկտեմբերի 15
86	33691189/2	Բետահիստին (բետահիստինի դիհիդրոքլորիդ) N07CA01	Լեհաստան	Դեղահատեր, 24մգ : Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	դեղահատ	67,00	80400,00	1200	Ք. Երևան, Ամիրյան 23	1200	2017թ. Դեկտեմբերի 15

** մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

Ծանոթություն

* 2,5 տարուց ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ, մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետ առնվազն 2/3-րդը, իսկ առանձին դեպքերում (հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման դեպքերում) դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն 1/2-րդը:

**Դեղերի տեխնիկական բնութագրերը կազմվել են 02.05.2013թ. N502-Ն կառավարության որոշման համաձայն:

***Ապահովել դեղերի տեղափոխման և պահպանման պայմանները ՀՀ առողջապահության նախարարի 09.09.2010թ. N17-Ն հրամանով սահմանված պահանջներին համապատասխան:

- **Դեղորայքը պետք է գրանցված լինի Հայաստանի Հանրապետությունում:**

Տեխնիկական բնութագրերով բոլոր հղումների դեպքում Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի, 5-րդ մասի համաձայն հասկանալ կամ համարժեքը:

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301075
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ

Ա. Հովհաննիսյան

ՎԱՃԱՌՈՂ

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ
ք. Երևան, Աբովյան42-2
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567

Տնօրեն

Ա. Ասատրյան

Հավելված N 2
«04» 12 2017թ. կնքված
11/275-2017 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**		
			նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
12	33661159/3	Ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ) C01CA06	0	1520,00	1520,00
13	33621330/2	Նիկեթամիդ R07AB02	0	5600,00	5600,00
15	33671121/2	Արծաթի պրոտեինատ D08AL01	0	5072,00	5072,00
21	33691239/2	Ռոպինիրոլ (ռոպինիրոլի հիդրոքլորիդ) N04BC04	0	93852,00	93852,00
24	33691138/2	Գլյուկոզ b05cx01, v04ca02, v06dc01	0	1504,95	1504,95
29	33631440/2	Բորաթթու, կապարի ացետատ, նատրիումի տետրաբորատ, տալկ, սալիցիլաթթու, ցինկի օքսիդ, անանուխի յուղ, հեքսամեթիլեն տետրամին, ֆորմալդեհիդի լուծույթ D08AX	0	13888,00	13888,00
37	33631230/3	Պովիդոն յոդ D08AG02, D09AA09, D11AC06, G01AX11, R02AA15, S01AX18	0	11419,45	11419,45
38	33651135/4	Քլորամֆենիկոլ D06AX02, D10AF03, G01AA05, J01BA01, S01AA01, S02AA01, S03AA08	0	8184,00	8184,00
40	33611200/2	Լոպերամիդ A07DA03	0	3200,00	3200,00
41	33691136/7	Նատրիումի քլորիդ A12CA01, B05CB01, B05XA03	0	8674,20	8674,20
42	33691136/6	Նատրիումի քլորիդ A12CA01, B05CB01, B05XA03	0	9124,50	9124,50
43	33691136/5	Նատրիումի քլորիդ A12CA01, B05CB01, B05XA03	0	1501,00	1501,00

45	33651170/5	ԱցիկլովիրD06BB03, J05AB01, S01AD03	0	5180,00	5180,00
46	33651127/2	Դոքսիցիկլին A01AB22, J01AA02	0	2030,00	2030,00
50	33642230/6	Լևոթիրոքսին H03AA01	0	10440,00	10440,00
52	33642230/4	Լևոթիրոքսին H03AA01	0	11656,00	11656,00
65	33621740/4	Ամլոդիպին C08CA01	0	14835,00	14835,00
70	33621700/3	Մետոպրոլոլ C07AB02	0	21600,00	21600,00
72	33621420/3	Ատորվաստատին C10AA05	0	43200,00	43200,00
75	33651129/2	Կլարիթրոմիցին J01FA09	0	107553,60	107553,60
80	33621310/2	Տրիմետազիդին (տրիմետազիդինի դիհիդրոքլորիդ) C01EB15	0	59280,00	59280,00
83	33621550/2	Ռամիպրիլ C09AA02	0	24000,00	24000,00
85	33611300/3	Գլիբենկլամիդ, մետֆորմին (մետֆորմինի հիդրոքլորիդ) A10BD02	0	32838,00	32838,00
86	33691189/2	Բետահիստին (բետահիստինի դիհիդրոքլորիդ) N07CA01	0	80400,00	80400,00
	ԸՆԴԱՄԵՆԸ		**0**	**576552,70**	**576552,70**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

***** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափը:***

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301075
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

ՎԱՃԱՌՈՂ

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ
ք. Երևան, Աբովյան42-2
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567

Տնօրեն

Ա. Ասատրյան

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N _ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն